

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՖՂԱՆՍՏԱՆԻ ԴԱՐԻՆ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒ

Սինչև 20-րդ դ. վերջերը լեզվաբանական գրականության մեջ, մասնավորապես աշխարհի ժողովուրդների լեզուների ծագումնաբանական դասակարգման ոլորտում, Աֆղանստանի *դարի* լեզվին առանձին, որոշակի տեղ չի հատկացվել: Ինչպես աֆղանստանցի, այնպես էլ օտարերկրյա լեզվաբանների, պատմաբանների, գրականագետների աշխատություններում այն հիշատակվում է «Ֆարսիե Աֆղանեսթան» (*Աֆղանստանի ֆարսի*), «Ֆարսիե Զաբուլի» (*Զաբուլի ֆարսի*), «Ֆարսի» (պարսկերեն), «Ֆարսիե աֆղանի» (*աֆղանական ֆարսի*), «Ֆարսիե հենդի» (*հենդկական ֆարսի*), «Թաջիքիե Աֆղանեսթան» (*Աֆղանստանի տաջիկերեն*) անվանումներով:

Ընդ որում գերիշխող է հանդիսացել այն կարծիքը, որի համաձայն *դարին* նույն պարսկերենն է, որը կիրառվել է բնակչության կողմից որպես պաշտոնական լեզու: Այն միտքն է արծարծվում նաև, որ իբր Զաբուլի քաղաքը տաջիկերենի խոսվածքներից է՝ այն սխալմամբ «Զաբուլի տաջիկերեն» տերմինով անվանելով: Սրանց զուգահեռ եղել է կարծիք, համաձայն որի Աֆղանստանում տաջիկերենը գործածվել է որպես խոսակցական, իսկ պարսկերենը՝ գրական լեզու:

Դարիի որպես առանձին ինքնուրույն լեզվի ճանաչման, գնահատման և որակավորման խնդիրն առաջին անգամ առանձնացվեց և իր լուծումը գտավ 20-րդ դ. 2-րդ կեսին՝ պաշտոնապես *դարի* վերանվանվելով, որով և պայմանավորվեց մի կողմից նրա ինքնուրույն անկախ զարգացման, նրա գնահատման գործում գոյություն ունեցող սխալ կարծիքների՝ վերացման հնարավորությունը (հատկապես Աֆղանստանի գրական և խոսակցական լեզուների տարբերակման հարցում), մյուս կողմից գիտական կիրառական ու քաղաքական մեծ հետաքրքրությունը *դարիի* ուսումնասիրությանը, մասնավորապես նրա հնչյունական համակարգի, քերականական կառուցվածքի, ինչպես նաև բառապաշարի ու դարձվածաբանության նկատմամբ:

Ժամանակակից դարին կամ ժամանակակից Աֆղանստանի *դարին*, ինչպես շատ հաճախ անվանվում է նաև մեր օրերում, իր ամբողջության մեջ հատուկ և բազմակողմանի ուսումնասիրության առարկա է: Նրա բոլոր նյութական բնագավառները հավասարապես գիտական և գործնական մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Դա վերաբերում է ոչ միայն հնչյունական

համակարգին ու քերականական կառուցվածքին, այլև բառային կազմին, որի ուսումնասիրությունը, ինչպես նաև նրա ու պարսկերենի բառային փոխհարաբերությունների և հայերենում կիրառվող մի շարք բառերի հնչյունական նմանությունների լուսաբանումը կարևոր նախապայման են այդ լեզվի գործառական և կառուցվածքային ըննության ճանապարհին:

Իրանագիտության մեջ *դարհի* պատմական գոյացման վերաբերյալ դեռևս միասնական կարծիք գոյություն չունի: *Դարհի* որպես ինքնուրույն լեզվի առանձնացումը ընդունվում է 18-րդ դարի կեսերից, նայած որ այն մինչ այդ և 20-րդ դ. 60-ական թվականները չէր կրում այդ անվանումը:

Ուսումնասիրելով Աֆղանստանում այդ լեզվի անցած ուղին և նրա զարգացման ընթացքը՝ համոզվում ենք, որ *ժամանակակից դարհի* նախնական վիճակը սկսել է ձևավորվել դեռևս Արևելյան Իրանի Բալխ, Զերաթ, Նեյշաբուր, Բուխարա, Մարվ, Սամարղանդ և Զարուլ քաղաքներում, որտեղ և հիմնականում բնակվում էին իրանական ժողովուրդներ, որոնց լեզուներն իրենց կառուցվածքով շատ նման էին միմյանց՝:

Մեր քվարկության 7-8-րդ դարերը կարելի է համարել Աֆղանստանի *ժամանակակից դարհի* և նրա բարբառների ձևավորման ամենավաղ ժամանակաշրջանը: Այս կապակցությամբ մեջքերենք որոշ գիտնականների տեսակետներ: Մահմուդ Աֆշարը Նաջիբ Մայել Զերավիի «Պատմությունն ու լեզուն Աֆղանստանում» գրքի նախաբանում գրում է. «*Դարին* ծնվել և զարգացել է Աֆղանստանում, ոչ թե Իրանում: Այդ լեզուն խորասանից տարածվել է նաև Իրանի այլ նահանգներում, և շատ բանաստեղծներ ու գրողներ, հրաժարվելով իրենց բարբառներից, *դարին* դարձրել են իրենց ստեղծագործության լեզուն: Այնպես որ, մի քանի հարյուր տարի անց այն դարձել է Շիրազի, Գանջայի և Շիրվանի գրական լեզուն, որն էլ բալխեցի Մուլավիի շնորհիվ անցել է Փոքր Ասիա, ապա Օսմանյան պետության տարածք: Այսօր *դարին* Աֆղանստանի ամենատարածված լեզուն է և հանդիսանում է այդ երկրի գիտության և գրականության լեզուն»¹:

Իսկ ինքը՝ Նաջիբ Մայել Զերավին, գրում է. «Ճշգրիտ չենք կարող ասել, թե այսօրվա *դարհի* տերմինը Աֆղանստանում որ ժամանակներից է փոխարինել ֆարսի տերմինին, սակայն ակնհայտ է, որ մինչև վերջին տասնամյակներում այն կոչվում էր ֆարսի»²: Ոմանք էլ գտնում են, որ 1747 թ. երկրում ձևավորված աֆղանական առաջին միասնական պետության կազմավորման ժամանակներից հետո է, որ այն կոչվում է *դարհի*:

Մի խումբ արևմտյան աֆղանագետների կարծիքով *դարհի* տերմինի շրջանառությունն առաջարկվել է Աֆղանստանի դեկադար մարմինների կողմից՝ այն Իրանի պարսկերենից տարբերելու նպատակով՝:

Իրանի ճանաչված լեզվաբան Փարվիզ Նաթել Խանլարին նշում է. «*Դարին Աֆղանստանի երկու պետական լեզուներից մեկն է: Այն որոշակիորեն տարբերվում է պարսկերենից: Ունի քերականական մի շարք առանձնահատկություններ, որոնց շնորհիվ էլ տարբերվում է գրական պարսկերենից*»⁹: Իրանցի մեկ այլ լեզվաբան՝ Իրան Զալբասին, գտնում է, որ Աֆղանստանի *դարին* (*Ֆարսին դարին, դարին աֆղանին, ֆարսին աֆղանին*) պարսկերենի բարբառներից մեկն է, որը Աֆղանստանում ունեցել է իր բազմաթիվ ենթաբարբառները: Այդ լեզուն այսօր շուրջ 5 միլիոն տաջիկների, 3 միլիոն հազարիների և 500 հազար ղզլբաշների և չարայմաղների մայրենի լեզուն է, որոնք բնակվում են երկրի կենտրոնական, հյուսիսարևելյան և հարավարևմտյան նահանգներում¹⁰:

10-15-րդ դարերում, թուրք-մոնղոլական տիրապետության ժամանակներում, Աֆղանստանում մշտական բնակություն հաստատած մոնղոլական ցեղերի լեզուն խիստ ազդեցություն է թողել արդեն յուրովի, բայց դանդաղ զարգացող այդ երկրի պարսկերենի (հետագայում՝ *դարի*) բառային կազմի վրա: Ավելի ուշ՝ 18-րդ դարի երկրորդ կեսին և 19-րդ դարում, ֆեոդալական Աֆղանստանում *ժամանակակից դարին*, արդեն որպես գրական և պաշտոնական գործառության լեզու, խիստ տարբերվել է խոսակցական լեզվից: Այն հիմնականում գործածվել է ապլատական միջավայրում, պաշտոնական գրագրություններում և գրական ստեղծագործություններում, հատկապես՝ պոեզիայում:

ժամանակակից դարին իր ցեղակից պարսկերենի և տաջիկերենի հետ միասին դասվում է հնդեվրոպական լեզվաընտանիքի հնդիրանական ճյուղի արևմտյան իրանական լեզուների խմբին: Նրանց միջև գոյություն ունեցող ծագումնաբանական կապի արդյունք են բառային և քերականական բազմաթիվ ընդհանրությունները: Այդուհանդերձ, անցյալում այդ լեզուները կրող ժողովուրդները հաղորդակցվել են մեկ ընդհանուր պարսկերեն լեզվով:

Որոշ արևելագետներ այն կարծիքին են, թե իբր ժամանակակից Իրանում, Աֆղանստանում և Տաջիկստանում գոյություն ունեն երեք ինքնուրույն գրական լեզուներ, որոնցից յուրաքանչյուրն իր հիմքում պահպանում է ընդհանուր դասական գրական պարսկերենը¹¹: Ոմանք էլ կարծում են, որ ֆարսին, *դարին* և տաջիկերենը մեկ լեզվի, այսինքն՝ գրական պարսկերենի երեք տարբերակներ են¹²: Այս կապակցությամբ մենք ունենք մեր տեսակետը և *դարին* դիտարկում ենք որպես ինքնուրույն և անկախ պետության լեզու:

*ժամանակակից դարին*ի վերաբերյալ 20-րդ դարի սկզբներից սկսած՝ արևելագետների կողմից կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք մասնավորապես նշել են նրա և տաջիկերենի նմանությունների, Իրանի պարսկերենի և *դարին*ի միջև գոյություն ունեցող տարբերությունների մասին:

Դեռևս անցած հարյուրամյակի 2-րդ կեսին մեր հայրենակից, խորհրդային անվանի աֆղանագետ Մարտիրոս Սալամովն Աֆղանստանի ֆարսիի վերաբերյալ իր արժեքավոր հոդվածներից մեկում պնդել է *դարիի* ինքնուրույն լեզու լինելը և առաջարկել ընդունել այն հենց որպես այդպիսին: Նման տեսակետ է արտահայտել նաև իրանցի գիտնական Մահմուդ Աֆշարը: Նա աֆղանստանցի մտավորական Ն. Մ. Գերավիի վերոհիշյալ աշխատության նախաբանում նշել է. «Ես, որպես մի իրանցի, պնդում եմ, որ *դարին* դառնա Աֆղանստանի պաշտոնական և ազգային լեզուն»¹²:

Աֆղանստանի 1964 թ. Սահմանադրության մեջ արդեն ֆարսիի փոխարեն շրջանառության մեջ է դրվել *դարի* բառը¹³: Այդուհանդերձ դեռևս թե Աֆղանստանում և թե Իրանում շատերը շարունակում են այդ լեզուն անվանել *ֆարսի*, *դահրե* *աֆղանի*, *ֆարսիե դարի*, *ֆարսիե աֆղանի*, երբեմն էլ նույնիսկ *աֆղանի*: Այս կապակցությամբ հավելենք, որ աֆղանի տերմինը օգտագործելիս պետք է նկատի ունենալ փուշտուն (փաշթուն), այլ ոչ թե *դարին* կամ ֆարսին:

Դարին վերլուծական տիպի լեզու է, չունի, օրինակ, հոլովական համակարգ: Հոլովական իմաստներն արտահայտվում են նախդիրների, հետադրությունների և իզաֆեթի միջոցով: Ունի գրության արաբական համակարգ: Նրա այբուբենը բաղկացած է 32 տառերից: Այսօր փուշտուից փոխառած որոշ բառերի գրության մեջ գործածվում են վերջինիս ځ և څ տառերը, որոնք համապատասխանում են հայերենի Ժ և ց հնչյուններին: Երկրի *դարիալեզու* բնակչությունն այդ հնչյունները ճիշտ արտասանել չկարողանալու պատճառով դրանք արտաբերվում են համապատասխանաբար [z] և [s]: Օրինակ՝ *ոստիկան* غارسوی [gawranwōj] բառը արտասանվում է [sarandoy], *դատախազ* قاضی [gawranwāl] բառը՝ [sāranwāl], *դատախազություն* قاضیخانه [gawranwāl] բառը՝ [sāranwāl], *ինստիտուտ* پوهنځی [փոհանձայ] բառը՝ [poħanzay], *զբոսաշրջություն* گارسوی [գարոանդոյ] բառը՝ [garzandoy], *օր* دڼ [վառձա] բառը՝ [warsa] և այլն: Իսկ հաճախ վերոհիշյալ փոխառություններից غارسوی [sārandoy], غارنوال [saranwāl], غارنوالی [saranwāl], گارسوی [garzandoy] բառերը *դարիում* գրվում և արտասանվում են համապատասխանաբար غارندوی [sarandoy], غارنوال [saranwāl], غارنوالی [saranwāl], گارسوی [garzandoy] ձևերով:

Դարին, պահպանելով լեզվի դեռևս վաղ շրջանի, ինչպես նաև դասական լեզվի շատ միավորներ, անցել է զարգացման անհամեմատ դանդաղ ուղի: Դարերի ընթացքում հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի առաջընթացին զուգահեռ, պահպանելով իր ինքնուրույնությունը, կրել է բազմաթիվ փոփոխություններ, ստեղծել է հատուկ բառակազմական կաղապարներ, հարստացրել է իր բառային ֆոնդը՝ ներառելով նորանոր բառեր, նոր հասկացությունների անվանումներ, աստիճանաբար տարբերվել է իր

մերձավոր ցեղակից պարսկերենից և տաջիկերենից: Հնչյունական համակարգով տաջիկերենին մոտ կանգնած լինելով հանդերձ՝ այն այսօր բառային կազմով ավելի մոտ է պարսկերենին. թեկուզև այն պարզ պատճառով, որ նախ պարսկերենը բոլոր ժամանակներում ավելի հասանելի է եղել Աֆղանստանի դարիալեզու բնակչությանը, քան տաջիկերենը, այնուհետև այդ երկրի բնակչությունն իրանի ժողովրդի հետ շփվելու ավելի մեծ հնարավորություններ է ունեցել, քան խոհրդային Տաջիկստանի բնակչության հետ: Պատմության ընթացքում դարին պարսկերենից ավելի շատ քերականական երևույթներ, բառեր ու արտահայտություններ է փոխառել, քան տաջիկերենից: Այս խնդրում անկասկած դարիի և պարսկերենի գրության ընդհանրությունը ևս վճռորոշ դեր է խաղացել: Աֆղանստանի բնակչության համար սլավոնագիր տաջիկերենից օգտվելն անհամեմատ դժվար է եղել: Այդպիսի խոչընդոտ գոյություն ունի նաև մեր օրերում:

Ծանոթագրություններ

(Հղումներում պարսկերեն և դարի լեզուներով գրականությունը տրվում է անգլերեն գրությամբ)

1. Дорофеева Л. Н., Язык фарси-Кабули, Москва, 1960. с. 9.
2. Киселева Л. Н., Очерки по лексикологии языка дари, Москва, 1973, с. 32.
3. Там же, с. 33.
4. Додыхудоев Р., Назаров Х., Афганистан сегодня, Душанбе, 1988, с. 48.
5. Herawi N. M., Tarikh va zaban dar Afghanistan, Tehran, 1371 (1992), s. 8-9.
6. Yaghaghghi M. J., Juybare lahzeha, Jaryanhaye adabiyate moasere farsi, nazm va naasr, adabiyate moasere dariye Afghanistan, Tehran, 1379 (2000), s. 364.
7. Afghanistan (Majmueye maghalat), Negareshe goruhi az pajuheshgaran, Tehran, 1376 (1997), с. 69.
8. Khanlari N. P., Tarikhe zabane farsi dar se jeld, Tehran, 1374 (1995), jelde 2, s. 293.
9. Kalbasi I., Farsiye Iran va Tajikestan, Tehran, 1374 (1995), s. 35.
10. Киселева Л. Н., Язык дари Афганистана, Москва, 1985, с. 38.
11. Фархади Р., Разговорный фарси в Афганистане, Москва, 1997, с.5.
12. Herawi N.M., Tarikh va zaban dar Afghanistan, s.10.
13. Ахраниевич Р.Т., Афганистан в 1961-1966 гг., Москва, 1967, с.146.

В. ПАРСАДЯН

ДАРИ — ОДИН ИЗ НАЦИОНАЛЬНЫХ САМОСТОЯТЕЛЬНЫХ ЯЗЫКОВ СОВРЕМЕННОГО АФГАНИСТАНА

До последнего времени один из языков Афганистана — дари — не был учтен в классификации языков мира. Этот язык, официальное название которого — дари, стал известен только во второй половине XX века и был включен в западно-иранскую группу индоиранской ветви Индоевропейской языковой семьи.

Исследование показало, что этот язык в своем исходном состоянии формировался и развивался в городах Балх, Герат, Нейшмабур, Бухара, Мара, Самарканд, Кабул Западного Ирана. Об историческом образовании дари лингвисты и по сей день не имеют единого мнения: некоторые исследователи полагают, что дари формировался в Афганистане, другие считают его одним из диалектов персидского языка, который формировался на основе классического персидского.

Дари получил статус государственного языка в Конституции Афганистана 1964 г.

В статье исследуются общие черты развития языка дари, а также языка пушту и их соотношение с армянским языком.

MODERN DARI IN AFGANISTAN A SEPARATE LANGUAGE

Till recent years Afghanistani dari hasn't been given any significant place in the original division of the world languages. That language became known only in the second half of the XX century, officially being called dari. Today it is included into the group of West-Iranian languages of Indo-Iranian branch of IE family.

The study of the development of this language in Afghanistan proves that its former state was formed in the cities of Balkh, Herat, Naishabur, Bukhara, Marv, Samarkand and Kabul, Eastern Iran. However, there is not any single opinion about the historical origin of dari.

Some linguists tend to believe that it was formed in Afghanistan and not in Iran. Others find that dari is one of Persian dialects. There still exists an assumption that there are three independent literary languages in Afghanistan, Iran and Tadjikistan, each of them grown from the general classic Persian.

Today it is an obvious fact that the word dari was used instead of farsi in Afghanistan's Constitution in 1964.

The contemporary dari is a subject of special and thorough examination. All the material fields of that language are equally of great scientific and practical interest. Partially it refers first of all its phonetic system, grammatical structure, word formation and then to the word relations between itself and Persian, the differences between them and the illustration of phonetic similarities of some words used in Armenian.

The author of these lines points out that language has undergone a lot of changes due to public, political, economic and cultural progress of life within many centuries, has created a lot of word-building patterns which has included new words.

The author has also paid attention to ځ and چ letters used in the spelling of some borrowed words from pushtu which correspond to Armenian sounds d and g .